<<ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց 2022

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա - Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործում

Առարկա - Պատմություն

Հեղինակ - Ասյա Ֆերոյան

Ուսումնական հաստատությունը - <<Ծովագյուղի միջն. դպրոց>> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ - էջ 2-3

ՄԱՍ 1 - Ընտանիքի և դպրոցի համագործակցության ժամանակակից պայմաններն ու իրողությունները էջ 4-8

ՄԱՍ 1.1 - Դպրոցի պարտականություններն ու իրավունքները էջ 6-8

ՄԱՍ 2 - Ընտանեկան դաստիարակություն՝ գիտամանկավարժական օգնությամբ էջ 9-11

ՄԱՍ 3 - Դպրոցի և ուսուցիչների կողմից ծնողներին ցույց տրվող մեթոդամանկավարժական օգնության ձևերը էջ 12-14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ – էջ էջ 15-16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ – էջ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<< Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա>>:

Վ. Սուխոմլինսկի

Կրթության խնդիրների հաջող լուծումը հնարավոր է միայն ընտանիքի և դպրոցի համագործակցության դեպքում: Ընտանիքի, ծնողի կամ նրա օրինական փոխարինողի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Երեխայի կյանքը բաղկացած է երկու կարևոր ոլորտներից՝ դպրոցից և ընտանիքից, որոնք ենթակա են փոփոխության և զարգացման:

Բարեփոխումների շրջանում կրթական համակարգն այնքան արագ է փոխվում, որ ծնողները հաճախ չեն հասկանում այդ փոփոխությունները՝ ուսուցման և կրթական գործունեության մեջ կողմնորոշվելով հիմնականում իրենց դպրոցական փորձի համաձայն, որը հաճախ հետ է մնում ժամանակակից պահանջներից: Այս անհամապատասխանությունը վերացնելու համար ուսուցիչը պետք է ծնողների համար հնարավորինս բաց, տեղեկացված և հասանելի դարձնի ուսումնական գործնթացը:

Այս ուղղությամբ ուսուցիչների հիմնական խնդիրներն են խթանել դպրոց- ընտանիք միասնությունը, ընտանեկան համախմբվածությունը, ծնողների և երեխաների միջև առողջ հարաբերությունների հաստատումը, ընտանիքում երեխայի համար հարարավետ պայմանների ստեղծումը, ինչպես նաև ընտանիքի համապարփակ, համակարգված ուսումնասիրությունը, ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները:

Սակայն ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Հարկ է նշել, որ դաստիարակությունը որոշակի տեխնոլոգիաների համակարգ է, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը: Դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեության ընթացքում՝ նախադպրոցական, արտադպրոցական և այլ հաստատություններում:

Դաստիարակությունը հասարակական կյանքի անհրաժեշտ մասն է և սերտորեն կապված է ուսուցման հետ:

Երեխայի դաստիարակության գործում անհրաժեշտ է դպրոցի և ընտանիքի փոխգործակցությունը, առանց միմյանց օգնության անհնար է կրթության ոլորտում բարձր արդյունքներ ապահովելը:

ՄԱՍ 1.

Ընտանիքի և դպրոցի համագործակցության ժամանակակից պայմաններն ու իրողությունները

Տեղին է մեջբերել նշանավոր մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկիի ուղերձը ուղղված դպրոցին ու ծնողներին. << Դպրոցի և ծնողների խնդիրն է յուրաքանչյուր երեխայի երջանկություն պարգևելը:

Երջանկությունը բազմակողմանի է: Դա և՝ նրանում է, որ մարդը բացահայտում է իր կարողությունները, սիրում է աշխատանքը և դառնում դրանում ստեղծագործող, և՝ շրջապատող աշխարհի գեղեցկությունը վայելելու և ուրիշների համար գեղեցկություն ստեղծելու, և՝ մեկ ուրշին սիրելու, սիրված լինելու, երեխաներ դաստիարակելու մեջ…

Միայն ծնողների հետ միասին, ընդհանուր ջանքերով, ուսուցիչները կարող են երեխաներին մեծ երջանկություն պարգևել>>:

Ընտանիքի և դպրոցի փոխազդեցության հարցը բոլոր ժամանակներում շատ կարևոր է ու արդիական : Առավելապես այսօր սոցիալ – քաղաքական, սոցիալ- տնտեսական հարաբերությունների փոփոխությունները հանգեցրել են միջանձնային հարաբերությունների սոցիալ- հոգեբանական փոփոխությունների:

<< Կրթության մասին>> օրենքի դրույթները, որոնք հռչակում են կրթության կառավարման ժողովրդավարական, պետական- հրապարակային բնույթ… >> անհրաժեշտ պայմաններ են ստեղծում դպրոցի և ծնողների միջև համագործակցության ապահովման համար: Պետական կրթական համա- կարգը, որը ընտանիքը սահմանում է որպես հասարակության կարևորագույն հաստատություն, պետության հիմք, որը պատասխանատու է նոր սերունդների դաստիարակության համար, ծնողնե-րին համարում է կրթական գործընթացի հավասար մասնակիցներ:

<< ՈՒսումնական հաստատությունում նախնական հանրակրթական հիմնական կրթական ծրագրի իրականացումն ապահովելու համար ուսումնական գործընթացի մասնակիցների համար պետք է պայմաններ ստեղծվեն՝ ապահովելու աշակերտների, նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների, ուսուցիչների և հանրության մասնակցությունը>>:

Մեր օրերում շատ ընտանիքներ մտահոգված են տնտեսական բարեկեցության ապահովման հարցերով: Ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները , օրվա մեծ մասն անցկացնում են

Սուխոմլինսկի Վ. Ա. <<Ընտանիք և դպրոց>>, էջ 280

աշխատավայրում, իսկ տանը հաճախ են քննարկում դրամական խնդիրներ, ավելի ու ավելի խուսափելով երեխայի դաստիարակությունից՝ այդ պատասխանատու առաքելությունը թողնելով դպրոցի ու ուսուցիչների վրա: Իսկ սա իր հերթին մեծ խնդիրներ է ստեղծում ընտանիքի և դպրոցի փոխհարաբերություններում: Այսօր փոխվել են հենց իրենք՝ ոուսումնական հաստատությունները և ընտանիքի ընդհանուր մտավոր բաղադրիչը: Այսօր կատարվում է ընտանիքերի կտրուկ տարբերակում՝ ըստ տնտեսական չափանիշների, ըստ ուսումնական հաստատության պահանջների: Նախկինում, ավանդաբար, ընտանիքի և դպրոցի միջև փոխգործակցության բնույթը բնութագրվում էր որպես խորհրդատվական, հսկողական և վերաբերում էր հիմնականում երեխայի առաջադիմության և դպրոց հաճախելու հարցերին: Իսկ այսօր զգալիորեն ընդլայնվել է փոխգործակցության շրջանակը. Դրանք են՝ երեխաների ակադեմիական առաջադիմության և դաստիարակության, մասնագիտական սահմանման և պրոֆիլի ուսուցման, դպրոցի օժանդակության և պետական- հասարակական կառույցի միջոցով դպրոցի կառավարման խնդիրները: Իսկ ահա սա իր հերթին հանգեցնում է մի շարք հակասությունների, որոնք պետք է լուծվեն: Դրանք են.

** ընտանիքի նոր պահանջները ուսումնական հաստատության նկատմամբ և այդ պահանջները բավարարելու մեխանիզմների փնտրտուքը

** ինքնուրույն աշակերտի ահատականության դաստիարակության խնդիրը և նրա հաջող սոցիալականացման և ընտանիքի ու դպրոցի անբավարար ինտեգրացման խնդիրը:

Ընտանիքն առանցքային է երեխայի դաստիարակության համար, մեծ դեր է խաղում երեխա-յի վարքի, աշխարհայացքի և բարոյական նորմերի ձևավորման գործում: Երեխայի դաստիարակության գործում անհրաժեշտ է դպրոցի և ընտանիքի համագործացությունը, քանի որ ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները ցանկանում են իրենց երեխային տեսնել որպես մեր հասարակության արժանի քաղաքացիներ:

Առանց ծնող- դպրոց- ուսուցիչ կապի և օգնության անհնար է կրթության ոլորտում բարձր արդյունքներ ապահովել:

Տեղին է առանձնացնել << ընտանիք և դպրոց >> համագործակցության մի շարք խնդիրներ.

** Պետք է դպրոց և ընտանիք հաագործակցությունը դարձնել առաջնային

** Պետք է ապահովել դպրոցի և ընտանիքի միջև փոխադարձ ու սերտ կապի ըմբռնումը

** Անհրաժեշտ է դպրոց-ընտանիք սերտ համագործակցությամբ չեզոքացնել երեխայի վրա շրջապատի հնարավոր բացասական ազդեցությունները

** Համատեղ ջանքերով բացահայտել, ուղղորդել, աջակցել ու զարգացնել դպրոցական ու ընտանեկան կրթությունը:

Մեծ է ընտանեկան կրթության դերը մարդ- անհատի դաստիարակության գործում: Ընտանիքը փոխանցում է բազմակողմ սոցիալական փորձը երիտասարդ սերնդին, հանդիսանում է անհատի հասարակությանը ինտեգրման կարևորագույն փուլը: Ըստ այդմ էլ ՀՀ օրենսդրության համաձայն սահմանվում են երեխաների դաստիարակության գործում ծնողների սահմանադրական իրավունքներն ու պարտականությունները:

ՄԱՍ 1.1

Դպրոցի պարտականություններն ու իրավունքները.

** Դպրոցը ուսումնական գործընթացի ընթացքում պատասխանատու է սովորողի կյանքի ու առողջության համար

** Կազմակերպում է ուսումնական գործընթացը դպրոցում

** Սովորողին տրամադրում է հանրակրթությամբ սահմանված ծավալի գիտելիքների, հմտությունների և կարողությունների որոշակի պաշար

** Դպրոցի շրջանակներում առավել բանենպաստ պայմաններ է ստեղծում աշակերտի անձի մտավոր, բարոյական, էմոցիոնալ և ֆիզիկական զարգացման կարողությունների համակողմանի զարգացման համար

** Համարժեքորեն կիրառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, մեթոդները ու միջոցները աշակերտների տարիքային և հոգեֆիզիոլոգիական հակումներին, կարողություններին ու հետաքրքրություններին համապատասխան

** Անհրաժեշտության դեպքում կազմակերպում է մանկավարժական և հոգեբանական աջակցության տարբեր ձևեր՝ ուսումնական ծրագրին չտիրապետող սովորողներին օգնություն ցուցաբերելու համար:

Ըստ այդմ էլ սովորողների դաստիարակության և ուսուցման արդյունավետությունը կախված է նրանից, թե ուսուցիչն ու ծնողը կամ նրա օրինական փոխարինողը որքան սերտ են համագործակցում ու փոխազդում: Հաճախ ընտանիքում անհամաձայնության և բացասական մթնոլորտի միջավայրը, շրջապատում և դպրոցում ինտեգրվել չկարողանալը, երեխաների մոտ ձևավորում է վատ տրամադրություն: Դպրոցում նրանք չեն կարողանում կենտրոնանալ դասանյութի վրա և դառնում են ագրեսիվ իրենց դասընկերների և ուսուցիչների նկատմամբ: Ագրեսիվությունը շատ հաճախ դրսևորվում է նաև ընտանիքում՝ ծնողների և ընտանիքի մյուս անդամների նկատմամբ: Երբեմն տեղի է ունենում ճիշտ հակառակ երևույթը՝ երեխան մեկուսանում է դասընկերներից, ուսուցիչներից, խուսափում է ծնողների անհանգիստ հարցադրումներից:

Ահա հենց այստեղ է, որ ուսուցիչների և ծնողների ժամանակին ու փոխհամաձայնեցված գործելակերպը օգնում է սովորողներին հաղթահարել բացասական ազդեցություններն ու ծանր հոգեվիճակը

և ավելի ռեալ ընկալել իրականությունը, իսկ ապագայում լիարժեքորեն ինտեգրվել հասարակությանը:

Հասարակության յուրաքանչյուր անդամ ուղղակիորեն կամ անուղղակի, ամբողջությամբ կամ մասամբ կրում է դպրոցի և ուսուցչի ազդեցությունը, ըստ այդմ էլ դպրոցը և ուսուցիչը երկար ժամանակ դառնում են ծնողների մանկավարժական մշակույթի ձևավորման կենտրոնը: Հաշվի առնելով հասարակության ավանդական, ազգային ու ժամանակա- կից պահանջները, կրթական համակարգում մշակվել է ծնողների կամ նրանց օրինական փոխարինողների հետ համագործակցությանն ուղղված միջոցառումների համակարգ՝ ծնող- ուսուցիչ հանդիպումներ, ծնողական ժողովներ, ծնողկոմիտեների ու հանձնաժողովների հանդիպումներ, արտադպրոցական ու արտադասարանային աշխատանքներ ծնողների մասնակցությամբ, համատեղ էքսկուրսիաներ, դպրոցական ու դասարանային գործունեություն ծնողների մասնակցությամբ: Եթե ուսուցիչը կարողանում է նպատակասլաց և բազմակողմանիորեն օգտագործել ծնող-ուսուցիչ կապը, ապա ծնողների օգնությունը և մասնակցությունը աշակերտների դպրոցական և դասարանային գործունեությանը կարևոր դեր է խաղում երեխաների կրթական գործունեության զարգացման, ճանաչողական հետաքրքրությունների դաստիարակության գործում:

Սովորողները հենց իրենք էլ շատ լավ գիտակցում են ուսուցիչ-ծնող կապի կարևորությունը և նշանակությունը իրենց կրթության ու դաստիարակության գործում: Շատ հաճախ աշակերտներից մենք լսում ենք, որ դպրոցը իրենց երկրորդ տունն է, երկրորդ ընտանիքը: Ավանդական կրթության ժամանակ ծնողների պասսիվ մասնակցությունը դպրոցական կրթական համակարգին, նպաստում էր նաև սովորողների կարծես անվստահությանը իրենց ուսուցման, կրթության, ինչու չէ նաև դաստիարակության գործին ծնողի ու ընտանիքի մասնակցությունը:

ՈՒրեմն դպրոց- ուսուցիչ- սովորող- ընտանիք միությունը ուղղված է սովորողների անձի բարեկեցությանը ու ներդաշնակ զարգացմանը, սովորելու ցանկությանը, սովորողի ինքնավստահութան ամրապնդմանը: Այս համագործակցությունը բոլոր կողմերի միջև հսկայական ջանքերի և ստեղծագործական աշխատանքի ու համերաշխության արդյունք է, կողմերի միջև սերտ բարեկամության արդյունք է: Իսկ աշակերտի համար սովորելը դառնում է ավելի հեշտ, հետաքրքիր, մատչելի: Այսպիսի սերտ ու բարեկամական համագործակցությունը նպաստում է ժամանակակից մարտահրավերներին պատրաստ անհատի ձևավորմանը:

Պարֆենովա Ի. Կազակովա Է. <<Ընտանիքի և դպրոցի համագործակցության կազմակերպում>> , էջ 25-28

ՄԱՍ 2.

Ընտանեկան դաստիարակություն՝ գիտամանկավարժական օգնությամբ / արդյունավետ և փորձարկված մեթոդների կիրառում/

<< Գլխավորը որ պետք է ունենա դաստիարակը, դա հարգանքն է դեպի մարդկային բնավորությունը>>:

Դոբրոլյուբով

Աճող սերունդը հիմնականում դաստիարակվում է ընտանիքում՝ ծնողի, դըպ- րոցում՝ ուսուցիչ- դաստիարակի կողմից: Ծնողը երեխային բերելով դպրոց՝ հանձում է ուսուցչին: Այդ պահից ծնողի և ուսուցչի նպատակները երեխայի վերաբերյալ ամբողջովին միա- հյուսվում են: Ծնողի և ուսուցչի նպատակը նույնն է՝ ուսանել և դաստիարակել կիրթ ու զարգացած անհատ: Ակնհայտ է դպրոցի ու ընտանիքի փոխգործակցության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ընտանիքները պետք է լինեն համախոհների թիմ ու գործեն դպրոցի խնդիրներին համապատասխան: Այդ առումով ուսուցիչների հիմնական խնդիրները հետևյալն են.

** ծնողներին սովորեցնել մեծահասակների և երեխաների, ընտանիքի անդամների ուսուցման տեխնիկան,

** նպաստել դրական և բացասական իրավիճակների իրազեկմանը: Դա իրականություն կդառնա, եթե ուսուցիչներն ու ծնողները դառնան համախոհներ՝ դաստիարակության խնդիրների շահագրգիռ ու համակարգված լուծումներով: Ընտանիքի հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ ու բարդ խնդիրներից է:

<< Մարդկային վսեմ հատկություններով օժտված սերունդ դաստիարակելու խնդիրը կարելի է լուծել միայն ընտանիքի և դպրոցի միացյալ ջանքերով: Մարդու բնավորության գծերը, կենսական, ելակետային հակվածությունները վաղ մանկությունից հիմնավորվում են ընտանիքում, որոնք էլ, պարարտ հող հանդիսանալով ուսուցիչ- դաստիարակի համար, ծնողի հետ միասին կառուցում է նրա բարոյական կերպարի հոյակապ <<շենքը>> :

Ընտանեկան դաստիարակությունը՝ զուգորդված մանկավարժական օգնությամբ, հիմնական գործոնն է հայեցի դաստիարակության համար և գլխավոր պայմանը՝ համակոմանի զարգացման:

<< Ինչքան էլ պատասխանատու, դժվարին ստեղծագործական աշխատանք ունենաք արտադրություններում, իմացեք, որ տանը ձեզ սպասում է ավելի պատասխանատու, ավելի բարդ, ավելի նուրբ աշխատանք՝ մարդու դաստիարակումը>>,- գրում է Սուխոմլինսկին:

Ընտանեկան դաստիարակությունը զուգորդվում ու համալրվում է գիտականորեն կազմակերպված դպրոցական դաստիարակությամբ: Ծնողների մեծամասնությունը գիտակցաբար ընդունում և կատարում է ուսուցիչների պահանջները, քաջ գիտակցելով,որ միայն ծնող-ուսուցիչ փոխկապակցված աշխատանքի շնորհիվ է միայն հնարավոր ընտանիքում ճշտորեն կազմակերպել երեխաների դաստիարակության գործը:

Սովորողների վրա մի շարք մեթոդների դրական ներգործության արդյունավետությունը կաղված է ընտանիքի կենցաղից, ծնողի խոսքի ներգործությունից, երեխայի հոգեվիվիճակից, ընտանիքում ծնողների ու երեխաների միջև եղած փոխադարձ հարգանքից, ծնողի և ուսուցչի համագործակցված աշխատանքից:

Հաջորդ մեթոդը <<համոզման մեթոդն>> է, որի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի և ծնողի ճիշտ համագործակցային աշխատանքից: Սակայն միշտ չէ, որ այս մեթոդը ընթանում է հարթ ու հանգիստ պայմաններում: Պետք է և' ծնողը և' ուսուցիչը իմանան, որ սովորողները միանգամից չեն արձագանքելու իրենց պահանջներին ու հորդորին: Դրա համար պետք է նախքան համոզման մեթոդի կիրառումը, ուսումնասիրել երեխայի հոգևոր աշխարհը գնահատել նրա ապրումներն ու հակումները տվյալ պահին:

Համոզման խոսքը պետք է լինի կյանքում փորձարկված ու փաստարկների հիման վրա, համոզող կողմը չպետք է իր կարծիքը երեխային պարտադրի, սովորողին պետք է մտածելու և խորհելու որոշակի ժամանակահատված տալ:

Մյուսը <<հավատալու և վստահելու>> մեթոդների ճշտորեն կիրառումն է ծնողի և ուսուցչի կողմից: Դա առաջին հերթին նշանակում է ընտանիքում և դպրոցում ստեղծել նպաստավոր պայմաններ մարդկային հարաբերությունների նորմալ զարգացման համար:

Հ. Թադևոսյան <<Դաստիարակության խնդիրները հայ ազգային դպրոցում>>, էջ 88 Երևան 2005

<< Յուրաքանչյուր ծնող կամ նրա օրինական փոխարինողը և ուսուցիչը պարտավոր են իմանալ, թե որքան է խոցվում երեխայի ինքնասիրությունը, երբ չեն հավատում ու վստահում իրեն, երբ իր մասին ավելի թերհավատորեն են արտահայտվում, քան ինքը կա: Իսկ դրան հակառակ, երբ նկատում են երեխայի կարողությունները, վստահում և խրախուսում են նրան, աչալրջանալով, ավելի լավին ու գեղեցիկին է ձգտում: Երեխայի այդ բարոյական ջանքերի մեջ է, ըստ էության, ծնողական մանկավարժության գաղտնիքը՝ մանկավարժական օգնությամբ:

Հ. Թադևոսյան << Դաստիարակության խնդիրները հայ ազգային դպրոցում>>, էջ 101 Երևան 2005

ՄԱՍ 3.

Դպրոցի և ուսուցիչների կողմից ծնողներին ցույց տրվող մեթոդամանկավարժական օգնության ձևերը

Փաստ է, որ մանկավարժության մեջ կան այնպիսի օրինաչափություններ, որոնք իրենց կայուն հիմքով ու անհրաժեշտությամբ մնում են անփոփոխ բոլոր ժամանակներում: Առաջին հերթին դա վերաբերում է սովորողի դաստիարակության գործում ծնողի և ուսուցչի համատեղ աշխատանքի անհրաժեշտության օրինաչափությանը: Իսկ ուսուցիչը այն անհատն է, որ գիտականորեն համարվում է երեխայի զարգացումը կազմակերպողը ոչ միայն դպրոցում այլ նաև ընտանիքում: Երեխայի դաստիարակության խնդիրը տեսականորեն լուծվում են դպրոցում, իսկ ընտանիքում դրանք ամրապնդվում են: Եզրակացությունը հեշտ է՝ երեխայի դաստիարակության գործում գերիշխանությունը պատկանում է դպրոցին: Հասկանալով այս ամենը , երեխայի ապագայով մտահոգ ծնողների մի մասը ջերմ ու կազմակերպված հարաբերությունների մեջ է մտնում դպրոցի և ուսուցիչների հետ, իսկ իր էությամբ մանկավարժ-ուսուցիչը իրեն պարտավորված է զգում, իր գիտելիքներն ու փորձը օգտագործելով, օգնել ծնողներին, օժտել նրանց մակավարժական հմտություններով: Նպատակը մեկն է՝ համատեղ ուժերով նպատակաուղղել երեխայի դաստիարակությունը:

Դպրոցի և ուսուցչի պարտավորությունն է իմանալ, թե ինչ պայմաններում և ինչպես են դաստիարակվում երեխաները յուրաքանչյուր ընտանիքում: Դա օգնում է դպրոցին և ուսուցչին ճիշտ ղեկավարելու ընտանեկան դաստիարակությունը, ճիշտ ուղղություն տալու նրան: Դաստիարակությունը պետք է նպատակաուղղված լինի և՝ դպրոցում և՝ ընտանիքում:

Սովորողների ընտանիքներում ուսուցիչները հանդիպում են երկու ծայրահեղ դրսևորումների.

** ծնողի կողմից երեխայի կամքի կատարումը, որոնք սովորում են ամեն ինչ ստանալ, բայց ոչինչ չտալ

** ծնողի չափից ավելի խստապահանջությունը, դաժանությունը, որը պատճառ է դառնում երեխայի մի դեպքում երկչոտությանը, մյուս դեպքում՝ ատելությունը դեպի շրջապատը:

Երկու դեպքում էլ անհրաժեշտ է դպրոցի և ուսուցչի մանկավարժական միջնորդությունը:

Նման մտածելակերպ ունեցող ծնողների հետ ուուցիչը պարտավոր է տանել մանկավարժական բնույթի անհատական բազմաբնույթ աշխատանքներ՝ կազմակերպել խմբային հավաքույթներ ու սեմինար- խորհրդակցություններ, դպրոց հրավիրել մանկավարժ-հոգեբանների: Կարելի է կազմակերպել դասախոսություններ հետևյալ թեմաներով՝ << Ծնողական սիրո մասին>>, << Ծնողի հեղինակության դերը երեխայի դաստիարակության գործում>>, << Ծնող- երեխա փոխհարաբերությունները>>, << Ծնողի կողմից երեխային լսել ու հասկանալ կարողանալը>> և այլ թեմաներով: Իսկ որպեսզի դպրոցը և ուսուցիչը կարողանան ճիշտ մեթոդա- մանկավարժական աշխատանք ծավալել ծնողների շրջանում, պետք է ավելի մոտիկից շփվել սովորողների ընտանիքների հետ և հաղորդակից լինել նրանցում առկա բոլոր խնդիրներին, որոնցում քիչ չեն նաև բացասական երևույթները, որոշ դեպքերում նաև անվստահությունը դեպի դպրոցն ու ուսուցիչը:

Դպրոցի և ուսուցչի նպատակն է օգնել ծնողներին գտնելու երեխաների դաստիարակության արդյունավետ ու ճիշտ ուղիներ: Դպրոցի և ուսուցչի կողմից ծնողների հետ տարվող կրթական ու դաստիարակչական աշխատանքների մանկավարժական ղեկավարումը պետք է ուղղված լինի նրան, որ ընտանիքում շարունակվի ու ամրապնդվի այն ամենը ինչով առաջնորդվում են դպրոցում:

ՈՒսուցչի կողմից ծնողի և սովորողի հետ տարվող մանկավարժական աշխատանքների մեջ կարևոր դեր ու նշանակություն ունի զրույցի մեթոդը: Զրույցը ծնողի հետ անկեղծ ու սրտառուչ խոսակցությունն է, որը վերաբերում է կոնկրետ անձին: Զրույցի ընթացքում երկու դաստիարակներ մտքեր են փոխանակում երեխայի հետ տարվող դաստիարակչական աշխատանքները հետագայում շարունակելու և կատարելագործելու ուղղությամբ:

Մանավանդ ուսուցիչ-դասղեկի մանկավարժական աշխատանքը այնպիսի մասնագիտական բարդ ու դժվարին գործունեություն է, որի ընթացքում մի կողմից ծնվում են մանկավարժական հարցերի լուծման տեսական ու գործնական նոր միջոցներ, ձևեր ու ուղիներ, իսկ մյուս կողմից այդ խնդիրների լուծման ճանապարհին դրսևորվում է նրա մանկավարժական կարողությունների ստեղծագործական բնույթը: Խնդրի ճիշտ լուծումը կախված է նրանից, որ ուումնադաստիարակչական աշխատանքների գործընթացում ուսուցիչ-դասղեկ / դաստիարակ/ գլխավոր դերը նրանում է, որ մի կողմից պետք է կայուն գի- տելիքներ հաղորդի իր սաներին, զբաղվի նրանց բազմակողմանի զարգացմամբ, իսկ մյուս կողմից ապահովի

ընտանեկան դաստիարակության հետ մանկավարժական կապը ու օգնության խնդիրները:

Այդ աշխատանքի արդյունավետությունից է կախված դպրոցի և ուսուցչի հեղինակությունը ծնողների շրջանում:

ՈՒսուցչի գործունեության շրջանակները դպրոցում և ընտանիքում լավ ու ճիշտ կազմակերպելու համար, ուսուցիչը պետք է ծանոթ լինի աշակերտների որոշակի խմբերի տրամադրվածությանը և կարողություններին.

** ուսման մեջ և հասարակական աշխատանքներում գերազանց վարքագիծ ունեցող աշակերտներ ,

** աշակերտներ, որոնք ուսման մեջ փայլուն ցուցանիշներ ունեն, բայց ակտիվ չեն հասարակական աշխատանքներում,

** հաարակական աշխատանքներում մեծ ակտիվություն ունեցող աշակերտներ, բայց ուսման մեջ միջակ և միջակից քիչ բարձր ցուցանիշներ դրսևորողներ,

** միջակից ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ, որոնք շատ անտարբեր են հասարակական աշխատանքներում,

** աշակերտներ, որոնք որպես պարտականություն են դպրոց հաճախում:

Ահա աշակերտների այսպիսի խմբերի հետ, ամեն օր, չթուլացող եռանդով պետք է աշխատի ուսուցիչը դպրոցում գործընկերների հետ, ընտանիքում՝ ծնողների հետ: Եվ պետք է խոստովանել , որ այն ուսուցիչն է հաջողության հասնում, ով կարողանում է ընտանեկան դաստիարակությունը համատեղել դպրոցական մանկավարժության հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դասիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունը արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Դպրոցը, ուսուցիչներն ու ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության ու փոխհամաձայնության՝ երեխայի կյանքը չի կարող լիարժեք լինել: Դպրոցը սովորողին տալիս է գիտական գիտելիքների հիմունքները և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Իսկ ընտանիքն էլ իր հերթին երեխային ապահովում է կյանքի իրական ու պրակտիկ փորձով: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց լսելու, հասկանալու, օգնելու և կարեկցելու կարողությունները: Անձի ներդաշնակ զարգացման համար դպրոցի և ընտանիքի միասնական, փոխադարձ համագործակցությամբ և գիտական հիմքով ստեղծված այդ որակները խիստ ահրաժեշտ են անհատի ձևավորման ու ներդաշնակ զարգացման համար: Սովորողների նկատմամբ տարվող դաստիարակչական գործունեությունը համակողմանի զարգացման լայն հնարավորություններ է ստեղծում: Միայն հարկավոր է այդ հնարավորությունները օգտագործել ճիշտ ու գրագետ ձևով: Դպրոցն ու ուսուցիչը հենվելով սովորողների կոլեկտիվի, դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչների օգնության վրա, մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին ու հասարակությանը՝ կարող են լուրջ ներդրում ունենալ ապագա քաղաքացու ներդաշնակ ձևավորման ու զարգացման գործում, քանզի երեխաների ճիշտ դաստիարակությունից կախված ողջ ժողովրդի ու հասարակության դաստիարակությունը:

Տեղին է շեշտել մեծ մակավարժ Մակարենկոյի խոսքերը. << Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակենք, մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև>>:

ՈՒրեմն հետևությունը սա է՝ դպրոցը, ուսուցիչը, ծնողը պետք է ճիշտ դաստիարակության միջոցով կարողանան կերտել երկրի ապագա պատմությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թադևոսյան Հրանտ- Դաստիարակության խնդիրները հայ ազգային դպրոցում,

<<Երևան>> հրատ. 2005թ.

2. Թումանյան Վ. Ս.- Մանկավաժական առաջավոր փորձը բոլորին, << Երևան>> հրատ. 1986թ.

3. Մկրտչյան Մ. Հ. –ՈՒսուցիչ- աշակերտ փոխհարաբերությունների մասին, << Երևան>>1979թ.

4. Պարֆենովա Ի., Կազակովա Է. Ընտանիքի և դպրոցի համագործակցության կազմակերպում, <<Դպրոցականների կրթություն>>, Մոսկվա 2002թ.

5.Կուզնեցովա Լ.Վ. –ՈՒսումնական աշխատանքը դպրոցում, <<Դպրոցական մամուլ>> 2002թ.

6. << Մեր նոր դպրոցը>> ազգային կրթական նախաձեռնություն. <<Կրթական տեղեկագիր>> թիվ 4 2010թ.

7. Սուխոմլինսկի Վ.Ա.- Ընտանիք և դպրոց, Կիև 2003թ.

8. Korczak J. << Ինչպես սիրել երեխային>>, Եկատերինբուրգ 2009թ.